# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք, գ. Ֆիոլետովո , fioletovovillage@mail.ru

N 59
*26 դեկտեմբեր 2013թ.*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ ենք ուղարկում Ֆիոլետովո համայնքի ավագանու թիվ, թիվ 23, 24 հավելվածով, 25, 26, 27 հավելվածով, 28 որոշումները

Առդիր 10 թերթ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱԼԵՔՍԵՅ ՆՈՎԻԿՈՎ**

*Կատ.* '

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Լ Ո Ռ Ո Ւ  Մ Ա Ր Զ
ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ОБЛАСТЬ ЛОРИ
СОВЕТ СТАРЕЙШИН
СЕЛА ФИОЛЕТОВО

*19 դեկտեմբերի 2013թ.*

# ՈՐՈՇՈՒՄ № 23

## ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման օրենքի» 16-րդ հոդվածի 3-րդ կետով՝ Ֆիոլետովո համայնքի ավագանին *որոշում է*

*Հաստատել Ֆիոլետովո համայնքի 2014թ. բյուջեն:*

| *Համայնքի ավագանու անդամներ* | | | *կողմ* | *դեմ* | *ձեռնպահ* |
|---|---|---|---|---|---|
| Զադորկինա | Տատյանա | Ալեքսեևնա | [signature] | | |
| Զադորկին | Վալերի | Ալեքսեևիչ | [signature] | | |
| Զադորկինա | Օլգա | Վասիլևնա | [signature] | | |
| Նովիկով | Վալերի | Ալեքսեևիչ | [signature] | | |
| Սամոդուրով | Պավել | Վլադիմիրովիչ | [signature] | | |
| Ցիկինա | Վալենտինա | Պետրովնա | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] Ա.Ի.ՆՈՎԻԿՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 դեկտեմբերի 2013 թ. N 24-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ֆիոլետովո գյուղական համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո գյուղական համայնքում 2014 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *կողմ* | *դեմ* | *ձեռնպահ* |
|---|---|---|---|
| Զադորկինա Տատյանա Ա. | [signature] | | |
| Զադորկինա Օլ·ա Ն. | [signature] | | |
| Ցիկինա Վալենտինա Պ. | [signature] | | |
| Սամոդուրով Պավել Վ. | [signature] | | |
| Զադորկին Վալերի Ա. | [signature] | | |
| Նովիկով Վալերի Ա | [signature] | | |

Համայնքի ղեկավար [signature] Ա.Ի. Նովիկով

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
գյուղական համայնքի ավագանու
2013 թ. դեկտեմբերի 19-ի թիվ 24 -Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտներիհամար՝ 3000 դրամ.

բ. սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ.

501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10 000դրամ.

1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 20 000դրամ.

3000-ից և ավելիւ քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000դրամ.

2) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝2000 դրամ.

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով, տեղական տուրքը սահմանել՝ 3000 դրամ

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի առքարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 3000 դրամ.

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000 դրամ.

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար ՝ 0 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 150 000 դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել30 000 դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 500 դրամ.

6.Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել հիսուն հազար դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 2000 դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 50 000 դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 0 դրամ:

10. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել` 5000 դրամ:

11. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել`5000 դրամ:

12. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից տեղական վճարը սահմանել` 3000 դրամ:

Համայնքի ղեկավար` Ա.Նովիկով

19 դեկտեմբերի 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Լ Ո Ռ Ո Ւ   Մ Ա Ր Զ
ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ОБЛАСТЬ ЛОРИ
СОВЕТ СТАРЕЙШИН
СЕЛА ФИОЛЕТОВО

*19 դեկտեմբերի 2013թ.*

# ՈՐՈՇՈՒՄ № 25

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման օրենքի» 16-րդ հոդվածի 5-րդ կետով և 61-րդ հոդվածով Ֆիոլետովո համայնքի 2013թ. բյուջեի բաժին 10 խումբ 7 դաս 1 հոդված 4729-ով համայնքի ավագանին որոշում է

նախատեսված միջոցներից տալ դրամական օգնություն:

1. Մորոզովա Տատյանա Վասիլևնա 100.000 (հարյուր հազար),
2. Զադորկինա Տատյանա Ալեքսեևնա 50.000 (հիսուն հազար),
3. Չիչյովա Օլգա Վասիլևնա 50.000 (հիսուն հազար),
4. Նովիկով Վալերի Ալեքսեևիչ 50.000 (հիսուն հազար),
5. Սամոդուրովա Տատյանա Վասիլևնա 50.000 (հիսուն հազար),

Ընդամենը 300.000 (երեք հարյուր հազար) դրամ:

| *Համայնքի ավագանու անդամներ* | | | *կողմ* | *դեմ* | *ձեռնպահ* |
|---|---|---|---|---|---|
| Զադորկինա | Տատյանա | Ալեքսեևնա | [signature] | | |
| Զադորկին | Վալերի | Ալեքսեևիչ | [signature] | | |
| Զադորկինա | Օլգա | Վասիլևնա | [signature] | | |
| Նովիկով | Վալերի | Ալեքսեևիչ | [signature] | | |
| Սամոդուրով | Պավել | Վլադիմիրովիչ | [signature] | | |
| Ցիկինա | Վալենտինա | Պետրովնա | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] Ա.Ի.ՆՈՎԻԿՈՎ

[stamp]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Լ Ո Ռ Ո Ւ Մ Ա Ր Զ
ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ОБЛАСТЬ ЛОРИ
СОВЕТ СТАРЕЙШИН
СЕЛА ФИОЛЕТОВО

*19 դեկտեմբերի 2013թ.*

# ՈՐՈՇՈՒՄ № 26

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով համայնքի ավագանին *որոշում է*

Ֆիոլտովո համայնքի 2013թ. բյուջեի բաժին 8 խումբ 4 դաս 2, 4819 հոդվածից որպես նվիրատվություն փոխանցել «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձնանց միությանը 20.000(քսան հազար) դրամ:

| *Համայնքի ավագանու անդամներ* | | | *կողմ* | *դեմ* | *ձեռնպահ* |
|---|---|---|---|---|---|
| Զադորկինա | Տատյանա | Ալեքսեևնա | [signature] | | |
| Զադորկին | Վալերի | Ալեքսեևիչ | [signature] | | |
| Զադորկինա | Օլգա | Վասիլևնա | [signature] | | |
| Նովիկով | Վալերի | Ալեքսեևիչ | [signature] | | |
| Սամոդուրով | Պավել | Վլադիմիրովիչ | [signature] | | |
| Ցիկինա | Վալենտինա | Պետրովնա | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] Ա.Ի.ՆՈՎԻԿՈՎ

[stamp]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 դեկտեմբերի 2013թ. N 27

## ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ 60-րդ հոդվածներով

Ֆիոլետովո համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Ֆիոլետովո համայնքի ղեկավարի վարձատրության չափը և աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Ֆիոլետովո համայնքի ավագանու 2013 թվականի 19 հուլիսի «Ֆիոլետովո համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին թիվ 10 որոշումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2014թ. հունվարի 1-ից:

Համայնքի ղեկավար Ա.Ի.Նովիկով

Հավելված
Ֆիոլետովո համայնքի ավագանու
«19 դեկտեմբերի 2013թ. թիվ 27 որոշման

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 8
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 200 000 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 160 000 |
| Աշխատակազմի քարտուղար | 1 | 158 000 |
| Աշխատակազմի առաջ.մասն.-հաշվապահ | 1 | 142 000 |
| Աշխատակազմի առաջ.մասն.-ֆինանսիստ | 1 | 142 000 |
| Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ | 2 | 121 000 |
| Տեխսպասարկման անձնակազմ | | |
| Հավաքարար | 1 | 59.600 |

Համայնքի ղեկավար՝ Ա.Ի.Նովիկով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Լ Ո Ռ Ո Ւ Մ Ա Ր Զ
ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ОБЛАСТЬ ЛОРИ
СОВЕТ СТАРЕЙШИН
СЕЛА ФИОЛЕТОВО

*24 դեկտեմբերի 2013թ.*

# ՈՐՈՇՈՒՄ № 28

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետով Ֆիոլետովո գյուղական համայնքի ավագանին *որոշում է*

Տալ համաձայնություն ՀՀ Լոռու մարզի Ֆիոլետովո գյուղական համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկության՝ համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասերից ծածկագիր 06-113-0020-0024 մեկ լոտով աճուրդով օտարելու նպատակով սահմանել մեկնարկային գին՝ 122600 ՀՀ դրամ: Աճուրդի մասնակցության վճարը 3000 դրամ, նախավճարի և աճուրդային քայլի չափը մեկնարկային գնի 5 տոկոս:

| *Համայնքի ավագանու անդամներ* | | | *կողմ* | *դեմ* | *ձեռնպահ* |
|---|---|---|---|---|---|
| Զադորկինա | Տատյանա | Ալեքսեևնա | [signature] | | |
| Զադորկին | Վալերի | Ալեքսեևիչ | [signature] | | |
| Զադորկինա | Օլգա | Վասիլևնա | [signature] | | |
| Նովիկով | Վալերի | Ալեքսեևիչ | [signature] | | |
| Սամոդուրով | Պավել | Վլադիմիրովիչ | [signature] | | |
| Ցիկինա | Վալենտինա | Պետրովնա | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] Ա.Ի.ՆՈՎԻԿՈՎ